




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ԱՊՐԻԼ 1. 1877.

ԹԻՒ 4.



ԱՅՍ ԱՐԱԳԻՆՆԵՐԸ ԶԱՓՈՋԱՆՑ ՇԱՏԱԿԵՐ ԸԼԼՈՒՄ ԵՆ

**ՆԱԻԱԿՏՈՒՅ ԱՐԱԳԻՆՆԵՐ**

Այս արագիլները չեն նմանիր այն արագիլներուն որ ամէն տարի գարնան եղանակին կու գան և մեր տանիքներուն վրայ մեծամեծ բոյներ շինելով կը բնակին անոնց մէջ:

Վերի պատկերին մէջ տեսնուած արագիլները վերին Նեղոսի եզերքին վրայ պրտուներու մէջ կը բնակին: Այս արագիլները գլխաւորապէս իրենց կացովը կը տարբերին անոնցմէ զորս մենք շատ անգամ կը տեսնենք:

Այս թռչնոց կտուցը երբեմն նաւակի և երբեմն մուճակի կը նմանցուի: Այս կտուցը շատ մեծ է, և եթէ արժան է թռչնոց շատակերութիւնը դատել անոնց բերնին մեծութենէն, այս արագիլները չափազանց շատակեր ըլլալու են: Անոնց կտուցին ծայրը կայ զօրաւ որ կեռ մը որով արագիլք իրենց կերակուրները մանր կտորներու կը բաժնեն:

Այս արագիլներուն գոյնը թուիս է, իսկ թեւերուն և ազլոյն գոյնը թուիսէն գրեթէ կարմիր կը փոխուի: Իսկ

բարանչիւր փետրոյ մէջ կայ սպիտակ նեղ շերտ մը, որ հեռուէն մոխրագոյն կը ցուցնէ թռչունը: Թռչնոյն պարանոցին շուրջը գանգրածեւ փետուրներ կան, որոնց մէջտեղը սեւ է, և ծայրերը՝ մոխրագոյն:

Այս թռչուններուն կերակուրը ձուկ է: Գրեթէ ամբողջ մայիս, յունիս և յուլիս ամիսներուն մէջ ձուկ կ'ուտեն, և յուլիսի վերջերը միայն ձուկ ուտելէ դադարելով բոյն շինել կը սկսին:

Այս արագիլներուն բոյները գետին եզերքը եղէգներու հովանոյն տակ շինուած են: Արու և էգ արագիլները մէկտեղ կ'աշխատին գետինը փորելու: Անոնց բոյնը գետնին մէջ խորունկ ծակ է, ուր կակուղ փետուր կամ պատտառ չկայ: Անծածկոյթ գետնի վրայ հակիթ կ'ածեն և ձագ կը հանեն, ձագերն ալ այն գետնին վրայ կը մեծանան:

Այս թռչնոց բարձրութիւնն իբր մէկ ու կէս կանդուն է:


**ԿԱԹԻՆ ՄԸ ԶՈՒՐ**

Ամենէն փոքր տունը ո՞րն է: Կաթիլ մը ջուր: այնպէս չէ՞: Այո՛, միլիմետր արարածներ կ'ապրին կաթիլ մը ջուրի մէջ: Ի՞նչ փոքր բաներ ըլլալու են անոնք: Այո՛՛ հիւլէներ: Մէկ մասնաշափին հազարերորդ կամ քսան հազարերորդ մասին մեծութեամբ և շատ զարմանալի ձեւերով արարածներ կը բնակին կաթիլ մը ջուրի մէջ: Անոնք շիշի, ձագ առի, պտղոյ, անիւներու, խեցգետնի, օձի, օձաձկան և որդերու կը նմանին: Ոմանք տըղբու կի պէս կակուղ են, այլք կարծր կեղեւներ ունին: Ոմանք կանանչ,

կարմիր կամ դեղին են, ոմանք ալ բնաւ գոյն չունին: Կանանք փրփուրը զոր կը տեսնէք անշարժ ջուրերուն վրայ այս տեսակ արարածներէ կազմուած է: Ոմանք փոսուռայի պէս լոյս կը ցայտեցնեն: Գիշեր ատեն ծովուն վրայ գացող շոգեմաւ մը շատ անգամ իր ետեւէն ջուրին մէջ լոյս մը կը թողու: Այն լոյսն ալ այս տեսակ միլիոնաւոր արարածներէ յառաջ կուգայ: Չկայ ծովու, կամ յստակ աղբեր, կամ լճի կամ առուակի կաթիլ մը ջուր, որ այն արարածներէն միլիոնաւորներ չպարունակէ: Ասոնք պարզ աչքով չեն տեսնուիր, այլ մանրացցոյցով միայն: Ասոնք ալ եղջիւր, ճիրան, մազ և թիակ ունին, և արագ արագ կը շարժին իբր թէ ընելու շատ գործ ունին և ժամանակը կարճ է: Այսպէս անոնք ալ իրենց ինկած գործը կը կատարեն:

Այս տեսակ արարածներէ կազմուած է այն բարակ աւազը որ կը գործածուի յախճապակեայ գեղեցիկ ամաններ շինելու: Եղիպատսի հոշապաւոր բուրգերն անոնցմով շինուած են: Վասնզի կրաքարն ուրիշ բան չէ, բայց եթէ այս տեսակ արարածոց գիւտնորը:

Աստուած ի՛նչ հոգ կը տանի ամենէն փոքր բաներն անգամ շինելու: Չկայ փոքր բան մը որ Աստուծոյ ինճամբէն և դիտողութենէն գուրս թողուած ըլլայ փոքր ըլլալուն համար, չկայ բան մը որ շատ փոքր ըլլալուն համար Աստուծոյ ընդարձակ թագաւորութեանը մէջ բանի մը չգործածուի: Աստուծոյ ամենէն մեծ գործերէն ոմանք, փոքր բաներու զօրութեամբ շինուած են: Ուրեմն թող մէկը չարհամարհէ փոքր տղաք:



ՅԱՆ ՀՈՍՏՈՒՄ ԳՐՅՈՒՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ

**ԹԻԹԵՆՆԻԿ**

Տաք օրերը կը մօտենան, ուստի և թիթեռնիկները սկսած են երեւան:

Ելլել: Վերի պատկերին մէջ թիթեռնիկ մը ցուցուած է: Այս թիթեռնիկը գարնան առաջին օրերն երեւան ելլող դեղին թիթեռնիկներէն ետքը տեսնուիլ կը սկսի: Որովհետեւ այս թիթեռնիկը ամէն տեղ կը գտնուի, թերեւս ձենէ ոմանք կը կարծեն թէ այս թիթեռնիկին վրայ ամէն բան գիտեն: Պատկերին մէջ տեսնուած թիթեռնիկը ամէն տեղ գտնուելուն համար շատ հասարակ է, բայց գեղեցիկ է: Կարմիր, սեւ և թուխ գոյներն ի՛նչ գեղեցիկ կերպով իրար խառնուած են այս թիթեռնիկին վրայ: Դուք ալ կրնա՞ք գոյներն այսպէս գեղեցիկ կերպով իրար խառնել և կարգի դնել: Մէկ մէկ վրձին և ներկ առնելով աշխատեցէ՛ք. տեսնենք, կը յաջողի՞ք:

Որչափ մեղմով դպչիք թիթեռնիկին, դարձեալ անոր մանր փետուրները կը թափին և խեղճ թիթեռնիկը կը վնասուի:

Երբէք տեսա՞՞՞ք էք այն որդը ուստի կ'ելլէ այս թիթեռնիկը: Այն որդն ալ այս թիթեռնիկին պէս գեղեցիկ և անոր պէս սեւ, թուխ եւ կարմիր գոյներ ունի: Երբ որդը պատրաստ է թիթեռնիկի ըլլալու, նախ թուղթի նման բանով մը կը փաթթուի: Այս վիճակին մէջ որդը ոչ աչք, ոչ բերան, ոչ քիթ և ոչ ոտք ունի: Որդը թխադոյն է, բայց անոր կռնակը կը փայլի ոսկեգոյն: Եթէ պարտէզներն երթաք, և պատերուն արեղդէմ ճեղքերուն մէջ նայիք, անտարակոյս յիշեալ որդերէն քանի մը հատ կը գտնէք: Որդերն իրենց պոչերէն կախուած են քարերէն, և եթէ ուշադրութեամբ չնայիք, չէք կրնար զանոնք քարերէն որոշել, վասնզի անոնց գոյնը քարի գունի շատ մօտ է: Որդերը, երբ կախուած են, հանդարտ կը մնան, բայց եթէ ձեռքով դպչիք անոնց, կ'ծկիլ կը սկսին, և անոնց կրճիկէն կրնաք հասկնալ թէ ողջ են: Եթէ շատ ուշադրութեամբ քաշէք, կրնաք այս որդերը քարերէն զատել: Որդը քարէն զատելն ետքը տուն տանելով եթէ զանի դաւաթի մը տակ դնէք, պիտի տեսնէք որ քանի մը օրուան մէջ որդը թիթեռնիկի փոխուած է: Այնուհետեւ կրնաք այն թիթեռնիկը դիտել, որչափ կ'ուզէք: Երբ անոր աչուրներուն նայիք, պիտի տեսնէք որ անոր աչուրները շատ խոշոր և զնդակի պէս կընեն: Թիթեռնիկը քանի՞ աչք ունի, դիտէ՞ք: Կը կարծէք թէ երկու աչք ունի:

Ոչ, թիթեռնիկն 32.000 աչք ունի: Այսչափ աչուրներով անշուշտ թիթեռնիկը շատ աղէկ կը տեսնէ: Թիթեռնիկը բաւական զննելն ետքը, թողէք որ երթայ գարնան քաղցր եղանակին թռչտի ուրախութեամբ:

**ՓԵՂՐՈՅ ԻՎԱՆՈՎԻՉ ԿՍՄ ՍԻՊԵՐԻԱ ԱՔՍՈՐԵԱԼ ՄԸ**

(Շ-ր. Ա-ե-դ-է-ի 3 Բ-ո-յ)

Միքայէլ քահանան խորհելով թէ փեղրոյ այսպիսի գործ մը կատարելու բաւական զօրութիւն չունէր, նախ զօրաւոր կերպով ջանաց ետ կեցնել զփեղրոյ այն նպատակէն, բայց բարի ծերունին տեսնելով որ կարելի չէր զանի համոզել, վերջապէս հաւանութիւն տուաւ անոր ճամբորդութեանը, և տղան սկսաւ պատրաստութիւն տեսնել:

Միքայէլ քահանան գիւղին մէջ լուր տարածեց թէ փեղրոյ երկար ճամբորդութիւն պիտի ընէր, և անոր համար անցազիր ալ առնելով սկսաւ անոր պէտքերը հոգալ: Փեղրոյի համար զոյգ մը նոր կօշիկ առաւ, և իր տղուն մուշտակն անոր տուաւ: Տեսնելով որ անոր գեղջկական վերաբերուին նոր էր, պատուիրեց անոր զայն իր հետն առնել, և անոր պայուսակին մէջ քանի մը պղնձէ դրամ դնելէ ետքը զանի իր հետն առնելով եկեղեցի տարաւ: Ծերունի քահանան եւ կեղեցոյն մէջ իր ոսկեղէն փոքրիկ խաչը փեղրոյին վիզը կախելով պատուիրեց անոր երկնից Աստուծոյն դիմել, երբ իր երկայն և վտանգաւոր ճամբորդութեանը մէջ օգնութեան կարօտ կ'ըլլայ:

Փեղրոյ ճամբայ ելաւ մութ և ահաւոր գիշեր մը, բայց չվախցաւ, և կը հաւատար թէ պիտի հասնէր իր նպատակին: Հարիւրաւոր մընոնք քաղց և շարունակ կը յեղյեղէր ետքութեանը բառը որ այն քաղաքին անունն էր ուր էր հայրը: Ճամբան հացի նեղութիւն բնաւ չկրեց, քանզի բուս գիւղացիք ազնուասիրտ և հիւրասէր ըլլալով անօթի չեն թողուր իրենց գիւղերէն անցնող ճամբորդներն և ուրիշ խեղճ մարդիկ: Այսպէս փեղրոյ ճամբորդեց բոլոր բուսիւ, և վերջապէս հասաւ Սիպերիոյ սահմանները: Հոն աւելի զոյշ ըլլալ պէտք էր, վասնզի Սիպերիոյ սահմանները որ և իցէ մարդ, մանաւանդ տղայ մը, կասկածելի կը համարուի:

Փեղբոյ արկածալից և երկար ճամբորդութենէ մը ետքը գտաւ իր հայրը որ մետաղներուն մէջ կ'աշխատէր, և միւս աքորերոց հետ կը բնակէր հիւզ մը որուն զգուշութեամբ պահպանութիւն կ'ընէին խաղախ զինուորները ոստիկանութեան տեսչի մը հրահրութեանը տակ: Փեղբոյի հայրը դործելու ատենն անգամ ծանր շրջաններով կ'ապուած էր, և այսպատճառաւ շատ դժուար էր անոր փախուսար:

Փեղբոյ իր հասակէն վեր իմաստութեան նշաններ ցուցնելով ոստիկանութեան զլխաւորին քով մտաւ դռնապանութեան պաշտօնով, և այսպէս կրցաւ աքորերոց վրայ բաւական տեղեկութիւն ստանալ ոստիկաններէն որ իրենց գլխաւորին քով կ'երթային: Փեղբոյ բոլոր ձմեռն ոստիկանութեան զլխաւորին քով անցուց, վասնզի գիտէր թէ անօգուտ էր ձմեռ ատեն իր հայրն ազատելու փորձել: Բայց երբ ձիւններն հալիլ և գարնան հովերը փրչել սկսան, տղան ժամանակը հասած համարեցաւ:

Փեղբոյ իր տիրոջը տունէն շատ անգամ բանտարկերոց հիւզը զրկուած էր, և բանտին պահապանաց ծանօթ ըլլալով ամէն տեղ կը պատէր և աչքէ կ'անցունէր: Այս պատեհութենէն օգուտ քաղելով շատ անգամ հօրը հետ կը խօսէր անոր փախստեանը վրայ, և վերջապէս նպատակը գործադրելու ատենը հասաւ: Փեղբոյ բանտին մտանտառի մը մէջ քարահատի մեծ մուրճ մը, քառակուսի կտոր մը ձող պողպատ և ձեռք մը գեղջկական հանդերձ պահած էր: Երեկոյ մը երբ երկինք մթնալ կը սկսէր և աքորերալք գործէն դարձած էին, Փեղբոյ ըստ իւր սովորութեան բանտը գնաց, իր թուղթերը պահապաններուն տուաւ, և հօրը քով երթալով ըսաւ անոր որ իր ետեւէն գայ: Ոչ ոք գիտէր թէ Փեղբոյ ազգականութիւն ունէր ի վանին հետ, ուստի պահպան խաղախները կ'արձելով թէ ի վան ոստիկանութեան տեսչին պիտի տարուի քննութեան համար, թող տունն անոր երթալ: Եւ որովհետեւ ի վան շրջաններով կ'ապուած էր, ոչ ոք խորհեցաւ թէ կրնար փախչիլ:

Փեղբոյ դէպ իր տիրոջը տունը գնաց, և երբ ճամբէն խտորելով ալ բանտին պահապաններէն չէր տեսնուեր, շուտով մտաւ անտառը ուր պահած էր վերոյիշեալ բաները, Հոն Փեղբոյ ի վանին շրջանները պողպատին

վրայ գնելով կտորաց մը ծով, պատաստուած հանդերձն ալ հօրը հագցնելով հանել տուաւ աքորի զգեստը: Այսպէս ի վան դարձեալ բուսգիւղացի մը եղաւ: Փեղբոյ բաւական ժամանակ տուած էր սորվելու գետը երթալու ամենէն մտա ճամբան, վասնզի կը խորհէր թէ հօրը փախուստը միայն գետի մը արագընթաց հոսանքին միջոցաւ կրնար յաջողիլ: Սակայն հայրը և տղան մինչեւ գետը հասնելու համար շատ մղձմներ պիտի քայլէին: Ուստի ցերեկները անտառներուն մէջ հանգչելով և գիշերները քայլելով սկսան առաջ տանել իրենց երկար և դժուարին ճամբորդութիւնը: Իրենց հետ ուտելիք չունէին, բայց հող չէին ընէր, վասնզի ազնուասիրտ

ԽՆՁՈՅՔ

Լուսիա, Մարիամ, Հեղինէ, Շուշան և փոքրիկ Յովսէփ խնջոյք մը ըրին իրենց մէջտեղ: Շուշան այս խնջոյքին մէջ մ'ը պաշտօն կատարելով տղայոց թէյի բաժակները լեցուց: Տղայք ոչ թէ բուն թէյ, այլ կաթնախառն չոր կը խմէին, և « սպիտակ թէյ » կ'անուանէին զայն:

Շուշան տղայոց բաժակները լեցնելու աշխատելով ժամանակ չէր գրտներ կերակուր ուտելու, ուստի ըսաւ. « Մարիամ տասն եւ հինգ բաժակ թէյ խմեց: » Շուշան ան ատեն սկսաւ հասկնալ թէ որչափ դժուարութիւն կը քաշէ տիկին մը որ շատ հիւր ունի:



ՄԱՐԻԱՄ ԵՎ ՇՈՒՇԱՆ ԹԵՅԻ ԽՈՒՆՁՈՅՔԸ ԿԸ ԼԵՑՆԵ

Սիրպերիացիք գիշերներն անկողին մտնելէ առաջ իրենց տանց պատուհաններուն առջեւ հաց և կաթ կը դնեն, որպէսզի փախստական աքորերալք գիշերներն այն հացը և կաթն ուտելով անօթի չմնան:


Այսպէս ի վան և անոր որդին երկար ատեն թափառելով հասան Պիէլա կամ Սպիտակ գետը: Ամէն բուս գիւղացի իրեն հետ միշտ տապար կը կրէ: ի վան և Փեղբոյ ալ ունէին տապարներ, և երբ գետին եզերքը հասան, այն տեղի խոշոր ծառերէն քանի մը հատ կտրելով ըստ մը շինեցին և լաստին վրայ նստելով սկսան հեռանալ այն երկրէն որը ատելու շատ իրաւունք ունէին:

(Պիտէ շարանակոտ)

Հեղինէ Շուշանին ըսաւ. « Վայելուչ չէ համբել թէ հիւրերը քանի՞ բաժակ թէյ խմեցին. » Բայց Շուշան առանց մտիկ ընելու Հեղինէի խօսքին, շարունակեց ըսել. « Այո՛, գիտեմ, տասնեւհինգ բաժակ թէյ խմեց: ժամանակ չունեցայ կարկանդակէն պատառ մը ուտել. հիմա ալ Յովսէփ անուշեղէնը թափեց: »

Լուսիա ալ խօսքի խառնուելով ըսաւ. « Այս հիւրերուն մէջ ամենէն հանգարտն իմ պէտէն է, որ ոչ շատ կ'ուտէ, և ոչ ձեռքը անուշեղէնի պնակին մէջ կը խոթէ: »

Այս փոքր տղայոց խնջոյքին պատկերը վերը ցուցուած է, հոն կը տեսնուի նաեւ Լուսիային պէտէն որ սեղանին գլուխը նստած է:



ԿԱՐՏԵՂՈՍ ԼԵՌԸ

ԳԷՇ ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Կրնա՞ք յիշել Սուրբ գիրքէն քանի մը դէպք որ գէշ սակարկութեան օրինակ են :

Նաւ գէշ սակարկութիւն ըրաւ երբ իր անդրանկութեան իրաւունքը ծախեց քիչ մը շիկածանի համար : Յուդա գէշ սակարկութիւն ըրաւ երբ իր Տէրը վաճառեց երեսուն կտոր արծաթի :

Մեր Տէրն ըսած է թէ ով որ իր հոգին կորսնցնելով աշխարհը կը շահի, գէշ սակարկութիւն ըրած կ'ըլլայ :

Ժամանակաւ նաւապետ մը իր նաւուն մէջ սպասաւորութիւն ընող տղուն մը գէշ սակարկութիւն ընել տալ ու զեց ըսելով անոր « Ի՞նչ տամ քեզի որ սուտ խօսիս ի նպատակ իմ » : Բայց տղան այսպէս պատասխանեց նաւապետին . « Եթէ աշխարհի բոլոր ոսկին ինձ տաս , դարձեալ սուտ չեմ խօսիր » :

ԳԻՒՅԱԶՆ ՄԸ

Յովհաննէս Մէյնարտ ճանչցուած էր իբրեւ հանճարեղ նաւաստի : Ան մառուան օր մը առաջնորդութիւն կ'ընէր նաւու մը որ հիւսիսային Ամերիկայի մէջ Դիթրոյիթէն Պուֆալոյ կ'երթար : Նաւապետը տեսաւ թանձր ծուխ մը որ նաւուն յատակէն դուրս կ'ելլէր և նաւաս ի մը կանչելով հրամայեց անոր երթալ տեսնել թէ ինչ էր այն ծուխը : Սիմոնը գնաց և քիչ մը ետքը դէմքով դարձաւ գոչելով , « Նաւը բռնկած է , կրակ կայ , կրակ կայ » : Նաւուն մէջ գտնուող բոլոր մարդիկ կրակը մարելու աշխատեցան , և սկսան գոչելով շուրջնաւը բոցերուն վրայ բայց ի զուր , վասն զի նաւուն մէջ

չատ ուետին կար և բոցերը առատ ճարակ կը գտնէին :

Նաւապետը հարցուց առաջնորդին « Ատի մինչև Պուֆալոյ քանի՞ մղոն է » :

Առաջնորդը պատասխան տուաւ . « Եօթը մղոն է » :

« Ո՞րչափ ատենէն կըրնանք հոն հասնիլ » :

« Եթէ այս արագութեամբ երթանք , երեք քառորդէ կրնանք հասնիլ » :

Նաւապետը նաւուն մէջ գտնուողներուն խորհուրդ տուաւ նաւուն

յառաջակողմը երթալ Բլորն այն կողմը դիմեցին , Յովհաննէս Մէյնարտ ղեկին գլուխը մնաց , բոցերն անոր շորս դին առնելով դրեթէ անոր շունչ առնել չէին տար : Նաւապետը փոքով ձայն տուաւ ըսելով « Յովհաննէս Մէյնարտ » :

« Ահա հոս եմ »  
« Ղեկին գլուխն ես »  
« Այո »  
« Նաւը ո՞ր կողմ կ'երթայ »  
« Գէշ ի հարաւային արեւելեան կողմը »

« Ուրեմն դէպ ի հարաւային արեւելեան կողմը ղեկավարէ մինչև ցամաք հասնինք » :

Քիչ մը ետքը նաւապետը դարձեալ կանչեց ղլմէյնարտ և ըսաւ . « Կրնա՞ս հինգ վայրկեան եւս դիմանալ » :

Յովհաննէս Մէյնարտ պատասխանեց . « Այո , Աստուծոյ օգնութեամբ կրնամ դիմանալ » :

Անոր սպիտակ մազերը գլխուն վրայ խանձոտած էին , և արդէն ձեռուրներէն մին անգոր եղած էր ղեկը կառավարելու : Ծերունին իր ծունկը ղեկին վանդակապատին վրայ , իր ակունքները և ափսաս ձեռքը անուշի վրայ դնելով ժայռի մը պէս հաստատուն մնաց : Նաւը ժամանակին հասաւ ցամաքը , բոլոր ճամբորդներն և նաւաստիք աղատեցան , բայց Յովհաննէս Մէյնարտ կիսայրեաց և անկենդան ինկաւ տախտակամածին վրայ :

ՀՈՆԵԼՈՒԿ

Ժամանակաւ պարտիզպան մը հարուստ մարդու մը երթալով անկէ գործ խնդրեց : Հարուստը պարտիզպանի կարօտ չէր , բայց ըսաւ անոր . « Առ այժմ՝ գործ մը կուտամ քեզի . եթէ այս գործը լաւ կատարես , քեզ իմ քովս կ'առնեմ և պարտիզիս մէջ գործ մը կուտամ քեզի » :

Պարտիզպանն ըսաւ . « Շատ աղէկ , կ'ընդունեմ ձեր այդ պայմանը » :

Հարուստն իր խօսքը շարունակելով ըսաւ . « Քեզի տալու գործս սա է , ինը ծառ ունիմ , կ'ուզեմ որ այս ծառերը տասը կարգի մէջ անկես այնպէս որ իւրաքանչիւր կարգին մէջ երեք ծառ գտնուի » :

Պարտիզպանն այս բանին վրայ խորհելով գտաւ թէ ինչպէս անկելու էր ծառերը որ հարուստ մարդուն առաջարկած պայմանին համաձայն ըլլային , և հարուստը ստիպուեցաւ գործ տալ պարտիզպանին :

Մեր լրագիրը կարգացող աղայք կրնա՞ն բսել թէ պարտիզպանն ինչպէս անկեց ծառերը :

ՍՈՒՐԲ ԳԻՐԿ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ու՛մբ մը մարդիկ քաղքէ մը կամաց կամաց դուրս կ'ելլեն : Ասոնք ծանր բեռ մը կը տատները կը դառնան , կը տեսնուի որ յուզարկաւոր են և դիակ մը կը տանին թաղելու : Կը թուի թէ այս

մարդիկ ասդին անդին կը նային վախով և անձկութեամբ : Յանկարծ անոնցմէ մէկը ստակալի աղաղակով կը ցուցնէ զինեալ մարդոց խումբ մը որ հովտին մէջէն յառաջ կուգան : Յուզարկաւորները , որ արդէն գերեզմանատունը հասած են , աճապարհանք կը բանան ամենէն մօտ գերեզմանը , և դիակը հոն նետելով փութով ետ կը դառնան աւելի ստիկմամբ , վասնզի մեռեալն ինքնին յարութիւն կ'առնէ , կը խօսի , կը հառաչէ և դէպ առաջ կը քալէ թաղուելէ ազատ ըլլալու համար :

Գիակը որո՞ւ գերեզմանին մէջ դրուեցաւ : Ո՞վ էին զինեալ մարդիկ որ ստակում և խուճապ պատճառեցին յուզարկաւորներուն : Այս պատմութիւնն ո՞ր կը գտնուի :

ԱՆՅԵԱԼ ԱՄՄՈՅ ՀԱՐՏՄԱՆՅ ՊԱՏՄՈՒՆ Կարմեղոս լեռը : Եղիա : Բահայի մարդարէներն որ կիսոն հեղեղատին մէջ սպաննուեցան : Գ թագ . ԺԸ . 20-40 :

Ամերիկայի միտոնարաց ընկերութեան կողմէն Իմրապիր Ճ . Ք . ԿՐԻՆ Ֆիլճանճըլար եօգուրու , Ամերիկան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա . ՅԱՌԱ ՊՈՅՆՅԱՆ